Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 20-02-2020 թ. որոշմամբ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԿԵՆՏՐՈՆ ԹԱՂԱՄԱՍ Վ.Սարգսյան փողոց 4
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00478
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		1998-04-14
1.5 ՀՎՀՀ-ն		01505118
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)99610500
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		anjela8205@mail.ru
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	2	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և հայմայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	հետազոտական աշխատանքներ	30884000
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	

9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
	0	0
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	0	0
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
հետազոտական աշխատանքներ	17852000	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	34873000	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	17852000	

Նշումներ՝

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___7___ թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ
ՀՀ, Երևան, Խորենացի 27ա/1
"London Business Group" JV LLC
27a Khorenatsi str., apt. 1, Yerevan, RA
Tel: (+37410) 541272, 560852
E-mail: audit@lbg.am
Web: www.lbg.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ռազմավարական և Ազգային Հետազոտությունների Հայկական Կենտրոն» Հիմնադրամի Ղեկավարությանը և Հոգաբարձուների Խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ռազմավարական և Ազգային Հետազոտությունների Հայկական Կենտրոն» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) կից ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019 թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Հիմնադրամի ֆինանսական վիճակը 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտվող տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների Էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների: Համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Հիմնադրամի ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող են ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը.
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք ղեկավարությանը աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Լոնդոն Բիզնես Գրուպ» ՀՁ ՍՊԸ

25 հունիսի, 2020 թ.

Աուդիտի ղեկավար
Մ. Խոջայան

Տնօրեն
Տ. Զորյան

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանո-թագր.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	-	3,299
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		-	*3,299*
Ընթացիկ ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր		-	-
Տրված կանխավճարներ	5	307	15
Դրամական միջոցներ	6	974	4,019
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		*1,281*	*4,034*
Ընդամենը ակտիվներ		**1,281**	**7,333**
Կապիտալ և պարտավորություններ			
Ընդամենը կապիտալ		-	-
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	7	-	3,299
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		-	*3,299*
Ընթացիկ պարտավորություններ			
Կրեդիտորական պարտքեր	8	137	490
Եկամուտներին վերաբերող շնորհներ	7	-	918
Պահուստներ	9	1,144	2,626
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		*1,281*	*4,034*
Ընդամենը պարտավորություններ		**1,281**	**7,333**
Ընդամենը կապիտալ և պարտավորություններ		**1,281**	**7,333**

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն
Մ. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Դանիելյան

Կ.Տ.

25 հունիսի, 2020թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Եկամուտներ			
Եկամուտ ճանաչված շնորհներ	10	21,151	27,882
Այլ եկամուտներ	11	1,599	395
Ընդամենը եկամուտներ		**22,750**	**28,277**
Ծախսեր			
Իրականացված ծրագրեր	12	(9)	(361)
Կառավարման և վարչական ծախսեր	13	(20,617)	(24,678)
Այլ ծախսեր	14	(2,100)	(3,238)
Ընդամենը ծախսեր		**(22,726)**	**(28,277)**
Զուտ եկամուտ (վնաս)		24	-
Ֆինանսական գործունեության արդյունք		-	-
Տարվա զուտ շահույթ մինչև շահութահարկը		24	-
Շահութահարկ		(24)	-
Տարվա զուտ շահույթ		-	-

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն
Մ. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Դանիելյան

25 հունիսի, 2020թ.

Կ. Տ.

Դրամական միջոցների հոսքերի հաշվետվություն

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Սկզբնական մնացորդ	6	**4,019**	**6,036**
Գործառնական գործունեություն			
Մուտքեր գործառնական գործունեությունից			
Ստացված նվիրատվություններ ու շնորհներ		30,884	25,159
Այլ մուտքեր		943	281
Ընդամենը մուտքեր գործառնական գործունեությունից		*31,827*	*25,440*
Ելքեր գործառնական գործունեությունից			
Ստացված ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների դիմաց		6,450	8,926
Աշխատավարձ և դրան հավասարեցված վճարումներ		11,021	12,817
Սոցիալական ապահովագրության վճարումներ		-	-
Հարկեր և այլ պարտադիր վճարներ		3,320	4,700
Այլ վճարներ		14,082	169
Ընդամենը ելքեր գործառնական գործունեությունից		*34,873*	*26,612*
Զուտ հոսքեր գործառնական գործունեությունից		**(3,046)**	**(1,172)**
Ներդրումային գործունեություն			
Մուտքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների իրացում		-	-
Մուտքեր ներդրումային այլ գործունեությունից		-	-
Ընդամենը մուտքեր ներդրումային գործունեությունից		-	-
Ելքեր ներդրումային գործունեությունից			
Հիմնական միջոցների ձեռքբերում		-	832
Ելքեր ներդրումային այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ներդրումային գործունեությունից		-	*832*
Զուտ հոսքեր ներդրումային գործունեությունից		**-**	**(832)**

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

(Շարունակություն)

(Ներկայացված է ՀՀ հազ. դրամներով)	Ծանոթագր.	2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ֆինանսական գործունեություն			
Մուտքեր ֆինանսական գործունեությունից			
Վարկերի և փոխառությունների ստացում		-	-
Մուտքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
Ընդամենը մուտքեր ֆինանսական գործունեությունից		-	-
Ելքեր ֆինանսական գործունեությունից			
Վարկերի և փոխառությունների մարում		-	-
Ելքեր ֆինանսական այլ գործունեությունից		-	-
Ընդամենը ելքեր ֆինանսական գործունեությունից		-	-
Զուտ հոսքեր ֆինանսական գործունեությունից		-	-
Դրամական միջոցների փոփոխություն		(3,046)	(2,004)
Արտարժութային միջոցների փոխարժեքային տարբերության արդյունք		1	(13)
Դրամական միջոցների մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում	6	974	4,019

Կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Տնօրեն
Մ. Սարգսյան

Գլխավոր հաշվապահ
Ա. Դանիելյան

25 հունիսի, 2020թ.

Կ.Տ.